

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2(16/17)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտիտական խորհրդի 09.11.16 թ.կայացած նիստի

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 34 անդամներից 29-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ`

1. ֆակուլտետի դեկան Յու.Լ. Վարդանյանի հաշվետվությունը 2015-2016 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
2. Հաղորդում մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների ղեկավարների նշանակման և 2-րդ կուրսեցիների թեմաների ու ղեկավարների ճշգրտման մասին: *Ձեկ.՝ ամբ. վարիչներ*
3. Հաղորդում ֆակուլտետում կոնստրուկտորական բյուրոների արդի վիճակների վերաբերյալ: *Ձեկ.՝ Մ.Ալեքսանյան
Տ.Աբրահամյան*
4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների հաշվետվությունները 2015/2016 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու համար ատեստավորման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ֆակուլտետի դեկան Յու.Լ.Վարդանյանի հաշվետվությունը 2015-2016 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Լսեցին- ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Յու. Լ. Վարդանյանը բացեց խորհրդի նիստը և հայտնեց: Նիստը նախագահելու համար բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վ.Ս.Հարությունյանը**:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Յու. Լ. Վարդանյանը զեկուցեց 2016-2017 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ: Ձեկուցողը մանրակրկիտ ներկայացրեց այդ ժամանակահատվածում ուսումնական, գիտական, մեթոդական և կազմակերպչական ուղղությամբ ֆակուլտետում կատարված աշխատանքները, նշեց ձեռքբերումներն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները: Ելույթ ունեցողը միաժամանակ պատասխանեց ներկաների կողմից առաջադրված հարցերին:

Արտատայտվեցին- ամբիոնների վարիչներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռ.Ս. Մարտիրոսյանը, Վ.Ս.Հարությունյանը, պրոֆ. Գ.Ս.Հաջյանը, դեցեմտ Ա.Յ. Մակարյանը և այլ աշխատակիցներ:

Արտահայտվողները դրական գնահատական տվեցին դեկան Յու.Լ.Վարդանյանի մեկ տարվա գործունեությանը և բարձրացրեցին իրենց հուզող հարցերը:

Համալսարանի ռեկտոր Ա.Սիմոնյանը նույնպես դրական գնահատելով դեկանի մեկ տարվա գործունեությունը, մանրամասն պատասխանեց նաև ներկաներին հուզող հարցերին:

Համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա. Սիմոնյանը նշեց, որ Յու.Լ.Վարդանյանը այն դեկաններից է, որին պետք է շնորհակալություն հայտնել բուհական կրթության ու վերջինիս կառավարման գործին իր նվիրվածության համար:

Ասվեց, որ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում կատարված աշխատանքները, ուսումնական, գիտական ու կազմակերպչական ոլորտներում ֆակուլտետի հաջողություններն հիմք են տալիս դրական գնահատել դեկանի գործունեությունը և հավանություն տալ հաշվետվությանը:

Որոշեցին.- Բաց քվեարկության հիման վրա միաձայն հավանություն տալ դեկան Յու.Լ.Վարդանյանի հաշվետվությանը՝ 2015-2016 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և դրական գնահատել այդ ժամանակահատվածում նրա գործունեությունը:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումները մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների ղեկավարների նշանակման և 2-րդ կուրսեցիների թեմաների ու ղեկավարների ճշգրտման վերաբերյալ:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին - Հաղորդում ֆակուլտետում կոնստրուկտորական բյուրոների արդի վիճակների վերաբերյալ:

Արտատայտվեցին.- Մ.Ալեքսանյան և Տ.Աբրահամյան մանրամասն ներկայացրեցին կոնստրուկտորական բյուրոների արդի վիճակը և անելիքները: Նշվեց, որ կատարվում են աշխատանքներ ուսանողներին ներգրավվելու համար:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռակա ասպիրանտ Լիլիթ Սուրենի Երանյանի (գիտ. դեկ.՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Կ.Ս. Ղանբարյան) հաշվետվությունը ասպիրանտական առաջին տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին- Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը հայտնեց, որ ասպիրանտը կատարել է առաջին տարում պլանավորած աշխատանքները: Ունի երեք տպագրված աշխատանք: Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին- Ասպիրանտ **Լիլիթ Սուրենի Երանյանի** ասպիրանտական առաջին տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Օրակարգը սպառված է:

*Խորհրդի նախագահ,
ԴԴ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր*

Յու.Լ. Վարդանյան

Գիտքարտուղար

Վ.Ռ. Թադևոսյան